# Ո Ր Ո Շ Մ Ա Ն   Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.04.2020թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Ալավերդի համայնքի Աքորի գյուղի վարչական տարածքում գտնվող սիլոսի հորը Ալավերդի համայնքի հաշվեկշռում ընդգրկելու մասին

(Զեկ. Ս. ԽԵԶՈՒՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, հաշվի առնելով, որ անշարժ գույքի նկատմամբ գոյություն չունեն իրավունք հաստատող փաստաթղթեր և այն Հայաստանի Հանրապետության կառավարության 14.03.1997թ. N 51 որոշումով չի փոխանցվել Աքորի գյուղական համայնքին՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ  է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի գյուղ Աքորի, փողոց 4, N 21 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 06-022-0038-0001-ից առանձնացված), սիլոսի հորը ընդգրկել Ալավերդի համայնքի հաշվեկշռում:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու շինության սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂՈՒՄ 06-0022-0038-0001
ԾԱԾԿԱԳՐԻՑ 0.02291 ՀԱ ՍԻԼՈՍԻ ՀՈՐԻ ԱՉԲԱՂԵՑՐԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Մ.Գ.Խեչումյան




ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ, ՆԱԶԱՐՅԱՆ